

## ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

(Իդիլիա)

**Ե**փրեմ պապը շատ ծեր էր:

Վաղուց նրա աչքերը չէին տեսնում, ականջները ծանր էին լսում, իսկ գլուխը շարունակ դողում էր հասած արևածաղկի պես: Դողում էին և նրա սառը, չոր ձեռները. այնպես որ, երբ նա թանով ապուր էր ուտում կամ շորվա, կերակուրը միշտ կաթկթում էր նրա սպիտակ, մի քիչ էլ կանաչած միրուքի վրա:

Բացի դրանից, Եփրեմ պապը չէր կարողանում երկար ման գալ, հեռու տեղ չէր գնում և միայն արև օրերին, երբ սիրտն ուզում էր զբոսնել տան առաջի պարտիզում, կանչում էր թոռանը՝ Աստղիկին, և նրա առաջնորդությամբ, ձեռնափայտը ձեռին, կամաց-կամաց ման էր գալիս ծառերի տակ: Հետո Եփրեմ պապի ատամներից շատերը թափվել էին, դրա համար էլ ոչ միս էր կարողանում ուտել, ոչ չոր հաց:

Շատ ծեր էր Եփրեմ պապը: Տանը նրան այնքան էլ չէին սիրում և ամեն բան չէին տալիս ուտելու: Բայց նա սիրում էր ամենքին, և ամենից շատ փոքրիկ Աստղիկին. պատմում էր նրան հեքիաթներ, առակներ, պատմում էր ուրիշ տղաների, աղջիկների մասին և այն մասին, թե ինչու են ընկնում աստղերը երկնքից: Երբեմն կոպեկներ էր նվիրում նրան, որ կոնֆետ առնի... Եվ դրա համար Աստղիկը պապին շատ էր սիրում, ամեն անգամ բռնում էր պապի ձեռից և առաջն ընկած ման ածում ծառերի արանքում ու բացատրում, թե որ ծառը որքան է բռնել, և թե ինչպես է ծաղկել մասրի թուփը... Բայց Աստղիկը շատ էր ափսոսում, որ պապը չի տեսնում այդ բոլորը, և որովհետև պապը չէր տեսնում, Աստղիկը խղճում էր նրան և ավելի սիրում:

Մի բան սակայն դուր չէր գալիս Աստղիկին, այն, որ պապը

հիվանդանում էր շուտ-շուտ:

Այժմ էլ՝ երեք շաբաթ էր ահա պապը հիվանդ էր: Երբ նա հագում էր, Աստղիկին թվում էր, թե չոր տերևներ են խշխշում նրա կրծքի տակ, իսկ քնած տեղը այնպես է խոխոացնում, մեկը կարծես խեղդում էր նրան... Քանի օր էր պապն ուզում էր դուրս գալ արևի տակ գրոսնելու, բայց տատը չէր թողնում. ասում էր՝ կմրսի... Եվ Աստղիկը զարմանում էր տատի վրա, թե ինչո՞ւ է նա այդպես անխիղճ մերժում պապին: Ինչ կա որ, - մտածում էր նա, - թո՞ղ պապը դուրս գա, էլի տուն կգա... Բայց տատը և մայրիկը չէին թողնում: Եվ քանի նրանք չէին թողնում, պապն ավելի էր ցանկանում դուրս գալ...

Եվ ահա մի օր պապն անսպասելի վեր կացավ անկողնից: Աստղիկն այդ օրը շատ լավ է հիշում: - Կիրակի էր. տատն ու մայրրկը գնացել էին ժամ, իսկ հայրիկը քաղաքումն էր: Երբ ինքը՝ Աստղիկը, փողոցից եկավ տուն, տեսավ պապը նստել է անկողնում և ձեռքերով բան է փնտրում կողքին:

- Ի՞նչ ես ուզում, պապի, - հարցրեց Աստղիկը:

- Շորերս, - ասաց պապը դողալով:

Աստղիկը տվեց նրան կապան, չուխան, ոտնամանները և գդակը: Պապը դողդողալով հագնվեց և փայտը ձեռին դուրս եկավ պատշգամ ու նստեց այնտեղ՝ թախտի վրա, արևի դիմաց:

Այդ օրը պապի դեմքը շատ տարօրինակ էր: Աստղիկը նայում էր նրան և զարմանում, թե ինչու այդպես մտամուլոր է պապը և ինչի՞ է ականջ դնում նա:

Պապն իսկապես ինչ-որ բանի ականջ էր դնում. գլուխը բարձր բռնած, աչքերը խուփ, նա կարծես կամենում էր լսել, թե ի՞նչ է կատարվում գյուղում և գյուղից դուրս... Քանի ժամանակ էր դուրս չէր եկել տնից և դրա համար, խորը ժունջ քաշելով, ուզում էր լսել կարծես դրսի կյանքը... Մի



քանի տարվա կուրությունը սրել էր նրա լսողությունը, ուստի և նա պարզ լսում էր մեղունների երգը օդի մեջ, բարդիների տերևների ուրախ ճրճքոցը և երեխաների զվարթ աղմուկը մի հեռավոր տան բակից: Նրա ականջին էր հասնում և եկեղեցու տոնական զանգահարությունը, որը կարծես թրթռում, խաղում էր օդի մեջ, և, շունչը կտրած, ընկնում գետին:

Ջանգերի դողանջը եփրեմ պապի հոգում զարթեցնում էր անցած-գնացած հուշեր, և նա իրեն տեսնում էր երեխա, որ Զատկին հոր հետ գնում էր եկեղեցի, ու զանգերը դողանջում էին այդպես հանգիստ ու միալար... Հետո նա իրեն տեսնում էր ջահել ու առողջ, որ նույնպես ջահել մի աղջկա հետ, թև-թևի տված պսակի է գնում, ու զանգերն էլ դողանջում էին այդպես թրթռալով... Վերջապես, նա տեսնում էր իրեն հասակն առած տղամարդ, որ գերանդին ձեռքին խոտ էր հնձում դաշտի մեջ... Զնգում էր գերանդին, լորերը թռչում էին խոտի միջից, խոտը լաս-լաս դարսվում էր շարքով և այսօրվա պես դարձյալ դողանջում էին ժամի զանգերը...

Այս բոլորը հիշելով՝ եփրեմ պապը հանկարծ զգաց հնձած խոտի հոտ և, բերանը բանալով, խորը շունչ քաշեց:

Աստղիկը, որ ամբողջ ժամանակ նայում էր հիվանդ պապին, հանկարծ զարմացավ, տեսնելով պապի դեմքը պայծառացած:

Պապը նորից խորը, երկար շունչ քաշեց:

- Աստղիկ:
  - Ի՞նչ է, պապի:
  - Ինձ տար բաղը:
  - Բա որ մրսեն, պապի, - ասաց Աստղիկը, տարակուսանքով նայելով պապի կույր աչքերին:
  - Չեմ մրսի, աղջիկս, գնանք...
- Եվ պապ ու թոռ ձեռք-ձեռքի տված մտան պարտեզ:

Ծերունին, ձեռքը թռռանը տված, քայլում էր նրա ետևից և հարցնում, թե ինչպես են ծառերը, բույրն էլ ծաղկել են արդյոք, ծաղիկները թափվել են, թե ոչ:

- Թափվել են, պապի, թափվել են,- պատասխանեց Աստղիկը:

- Պտուղներ երևում են ծառերի վրա:

- Այո, պապի, շատ...

- Էդ լավ է,- ասաց պապը,- էդ լավ է:

Խոսելով հասան փոքրիկ պարտեզի ծայրը, որտեղից մի փոքրիկ դռնակ էր բացվում փողոցի վրա: Պապն այդտեղ կանգ առավ և նորից շունչ քաշեց:

- Գնանք տուն, պապի,- ասաց Աստղիկը.- կմրսես, տատը կբարկանա...

- Չէ, բալիկս, չեմ մրսի,- հանգստացրեց պապը և շարունակեց շունչ քաշել:

Մի փոքր այսպես կանգնելուց հետո պապը հարցրեց.

- Հանդն էստեղից մոտիկ է, չէ՞, Աստղիկ:

- Հա, պապի, իհարկե, մոտիկ է:

- Դե որ մոտիկ է, աղջիկս,- ասաց պապը,- ինձ տար հանդը: Դու էլ քեզ համար ծաղիկ կքաղես:

Աստղիկն ուրախացավ.

- Հա՛, պապի, էնքան ծաղիկ կա հանդում...

Մի քանի բոպե անց արդեն գյուղացիները զարմանքով տեսան իրանց բակերից, թե ինչպես հիվանդ Եփրեմ պապը թռռան ձեռից բռնած գնում էր դեպի դաշտը: Նրանք գնում էին դաշտ և մոռացել էին, որ տանը մարդ չկա, և դռները բաց են հավերի ու շների առջև:

Փոքր հետո նրանք դուրս եկան դաշտը և երկար ժամանակ գնում էին խոտերի միջով: Պապը քայլում էր կռացած և հևում ամեն մի քայլ անելիս, բայց կարծես չէր հոգնում.



իսկ Աստղիկը պապի ձեռք բռնած առաջնորդում էր նրան և շարունակ խոսում. «պապի, դեսն արի՛», «պապի, առաջիդ քար կա», «պապի, լոք տո՛ւր...»: Եվ ծեր պապը թոռան ձայնին հնազանդ, կատարում էր նրա բոլոր պահանջները. լոք էր տալիս ջրի վրայից, թեքվում էր այն կողմը, ուր քաշում էր իրեն փոքրիկ աղջիկը:

Բավական տեղ գնալով՝ պապը կանգնեց, շունչ քաշեց քարծրահև ու հարցրեց Աստղիկին, թե ի՞նչ տեղ են գտնվում իրենք:

- Լավ տեղ ենք, պապի,- պատասխանեց Աստղիկը: - Էնքան ծաղիկ կամ...

Պապը շունչ քաշեց դարձյալ և հարցրեց.

- Անտառը մոտիկ է, համ...

- Հա, պապի, հրես մոտիկ: Դու տեսնո՞ւմ ես որ...

Պապը, առանց պատասխանելու, կույր աչքերը բարձրացրեց և ականջ դրեց: Այս անգամ նա ուզում էր լսել անտառի ձայնը: Եվ ահա պարզ նրա ականջին էր հասնում հինավուրց անտառի խշշոցը, որ նման էր գետի տևական շառաչի: Անտառը խշշում էր այնպես, կարծես բոլոր ծառերը միասին երգ էին ասում: Ինչ լավ է խշշում անտառը,- մտածեց պապը: Այդ խշշոցը նույնն էր, ինչ որ շատ-շատ տարիներ առաջ: Այդպես էր խշշում նա, երբ ինքը երիտասարդ էր. այդպես էր խշշում մերին, երբ նա հասակն առած տղամարդ էր... Այդ խշշոցը նույնն է, առաջվանը. նույնը կլինի և միշտ...

Ու Եփրեմ պապը տխուր հառաչանքով նստեց կանաչների վրա հանգստանալու, իսկ Աստղիկն սկսեց ծաղիկներ քաղել և վազել թիթեռների ետևից:

Նստած տեղը, բոլոր ժամանակ, Եփրեմ պապը շարունակում էր ականջ դնել:

Այժմ անտառի խշշոցի հետ նրա ականջին էր հասնում

աովի քչքչոցը... Նա ճանաչում էր այդ առուն, հնձի ժամանակ քանի անգամ էր հաց կերել նրա մոտ... Աովի քչքչոցի հետ Եփրեմ պապի ականջին էին հասնում և թռչունների երգը- այդ արտայտություններն էին երգում- և խոտերի շրշուներ, և հովից օրորվող թփերի շշուներ, իսկ հեռվից գալիս էր դարձյալ եկեղեցու զանգերի ձայնը ու խառնվում անտառի խշշոցին:

Ինչ լավ է խշշում անտառը...

Այսպես էր մտածում պապն իր սրտի խորքում, և նրա շրթունքները դողում էին հուզմունքից. ուզում էր աղոթել, բայց միտքն աղոթքի խոսքեր չէին գալիս... Մի փոքր էլ ականջ դնելով այդ ծանոթ, հարազատ ձայներին, պապը հանկարծ կռացավ և գլուխը խոնարհեց գետնին...

Երկար համբուրում էր նա կանաչով ծածկված հողը և անզուսպ արցունքներն առատորեն թափվում էին նրա աչքերից... Մի փոքր էլ, մի փոքր էլ, և նա ուժասպառ ընկավ կանաչների վրա...

Քիչ հետո, երբ Աստղիկը ծաղիկները գրկած վերադարձավ պապի մոտ, զարմացավ, որ պապը պառկել է...

«Պապն ինչո՞ւ է քնել էսպես», - մտածեց նա և ձայն տվեց:

Բայց պապը նրան չպատասխանեց:

Այդ ժամանակ Աստղիկն ավելի մոտեցավ նրան և շարժեց ձեռը.

- Պապի, այ պապի,- կրկնում էր ձեռքը քսելով պապի երեսին, գլխին:- Վեր կաց, գնանք... Դե, պապի, վեր կաց, տատը կբարկանա...

Պապը դարձյալ չէր զարթնում: Իսկ Աստղիկը շարունակում էր շարժել նրա ձեռը, գլուխը. աղերսում էր, որ զարթնի: Բայց պապը ժաժ չէր գալիս...

Այդ տեսնելով, վերջապես, Աստղիկը որոշեց և վազեց տուն՝ հայտնելու, որ պապը քնել է դաշտում ու չի զարթնում...

Բայց պապը չէր քնել...

Գնացին տեսան պապը մեռել էր դաշտում:

Երբ Աստղիկն այդ իմացավ, նա չէր կարողանում հավատալ, որ պապը մեռած լինի. նա չէր հավատում և նրան, թե պապին կտանեն իրենց տնից, և նա էլ ետ չի գա...

«Հապա էլ ո՞վ կպառնկի նրա անկողնում, - մտածում էր նա, - ո՞վ կհագնի նրա չուխան...»:

Եվ երբ մյուս օրը տերտերները պապին տարան ժամ, Աստղիկն սպասում էր, թե պապը կվերադառնա. բայց մութն էլ ընկավ, նա չեկավ... Իսկ երբ տան դռները փակեցին, որ քնեն, Աստղիկը սաստիկ տխրեց ու լաց եղավ վերմակի տակ:

Նա լաց էր լինում ու մտածում, թե ինչո՞ւ տան դռները փակեցին, չէ՞ որ պապը կարող է գալ. գուցե հենց հիմա էլ եկել ու կանգնել է դռան առաջ...

Լաց լինելով մտածում էր, թե ո՞վ պետք է այնտեղ ման ածի պապին, չէ՞ որ նա չի տեսնում, կարող է բարի դեմ առնել կամ ոտը ջուրը գցել...

- Ա՛խ, տեսնես կլինի մեկը, - մտածում էր Աստղիկը, - մի բարի տղա կամ մի բարի աղջիկ, որ խեղճ պապին ման ածի այնտեղ...

1916